

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Маскъ“.
Կամ Tiflis, Redaction „Maschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիւրով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Յարմար առիթ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վե-
հապա Վաթողիկոսի կոնգրէսը. Գրական հանդէս.
Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նիկոպոսից. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹ

Ձիւնորական վարչութիւնը այս ձմեռ մի
հետաքրքիր և ուսանելի գործի ձեռնար-
կեց։ Այլքի առաջ ունենալով այն հանգա-
մանքը, որ զինուորները գալիս են գիւղե-
րից և պէտք է իրանց կարճատեւ ծառայ-
ութիւնից նորից վերադառնան իրանց ծը-
նըդավայրերը՝ Պետերբուրգի զինուորական
չորանք մտածեց օգտուել ժողովրդի միջից
գուրս եկած այդ մարզիկանցից և նրանց
միջոցով տարածել գիտական օգտաւէտ տե-
ղեկութիւններ գիւղական տնտեսութեան
վերաբերութեամբ։ Նա հրաւիրեց գիւղա-
տնտեսական դպրոցի կառավարիչ Բար-
տաշիլին և առաջարկեց, որ նա դասա-
ստութիւններ կարդայ զինուորական հա-
մար վեց զորագնդերում և բացի այդ՝ օ-
ֆիցերներին համար՝ «Սոյիսնոյ գործող»
կոչված տեղում։

Փորձը գուրս եկաւ շատ աջող։ Ձիւն-
որական շրջանի բարձրաստիճան և հեղի-
նակաւոր անձինք մի քանի անգամ ներ-
կայ գտնվելով այդ դասաստութիւններին՝
համոզվեցին, որ գործնական գիտութիւն-
ներ և հմտութիւններ տարածելու այդ-
նոր ձևը շատ նպատակայարմար է։ Դա-
սաստութիւնների ժամանակ գործածվող
մեղակալ լսատներ և գործիքները ցոյց
տալով դարձնում էր դասաստութիւնը գիւ-
ղամասերի։ Ձիւնորները հետաքրքրվեցին
այդ դասաստութիւններով և ուրախու-

թեամբ յաճախում են նրանց։ Որոշված է,
որ դասաստութիւնները շարունակվեն ամ-
բողջ ձմեռվայ ընթացքում։

Ներկայ փորձը իր աջողութեամբ բաց
է անում գործնական գիտութիւնների ժո-
ղովրդացման համար մի նոր, ընդարձակ
ասպարէզ։ Ձիւնորները, իրանց մի քանի
տարվայ ծառայութեան ժամանակ, շատ
ազատ օրեր և ժամեր ունեն, որ կա-
րող են նրանք գործադրել իրանց համար
մեծ օգուտով, լսելով իրանց ապագայ
կեանքի համար անհրաժեշտ և օգտաւէտ
տեղեկութիւններ և հրահանգներ։ Վեր-
ջանելով զինուորական կեանքը և վերա-
դառնալով իրանց գիւղերը՝ նրանք կը տա-
նեն իրանց հետ օգտակար հմտութիւններ
և գիտելիքներ և այդպիսով մասամբ փո-
խարինած կը լինեն այն վնասը, որ առա-
ջացել է գիւղում նրանց բացակայութիւ-
նից։

Հետաքրքիր է ներկայ փորձը և ցանկա-
լի է, որ նա ստանար որոշ կազմակերպու-
թիւն, որպէս զի ուրիշ զինուորական շր-
ջաններ էլ կարողանային կամայկամայ
իրագործել այդ օգտակար գործը Ռուսաս-
տանի միւս մասերում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՌԱՎԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

Մկրտիչ ծառայ Յիսուսի Գրիստոսի և անհա-
սանելի կամօք Աստուծոյ Նախապատշաճ
և Վաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պա-
րիսը համազգական նախամեծար Աթոռոյ Ա-
րարատեան առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ
Վաթողիկէ Եփրեմին։

Գերազանց Տ. Թեմակալի վիճակին Վրաս-
տանի և Իմերէթի մ. Գեորգ արքեպիսկոպոսի,
հարազատ Մայր Աթոռոյ Հայրապետական օր-
հուրթամբ յայտ առնեմք։

Հնորակալութեան հեռագրերի համար՝ որոնց
հնորակ միայն հաճախատարութիւն մը արել
են տուլթանին և նորա սիրելի Պատրիքին։

Կառավարութիւնը, սա ժամանակուայ մէջ,
տուրքերի գանձումը յետաձգելով, ինքն է որ կը
չահի։ Թողնելով որ գաւառացիներ, իբրեւ թէ տուր-
քից ազատ, մի քան վաստկէ, նա շահերովը
միտալն, կարող է մի քանի տարեկանը հաւա-
քաբար գանձել, ուրիշ մեծ չարք է դա՝ որ
կանեն ժողովուրդին և ոչ բարքը։

Մեր միտմտ գաւառացիներ տակաւին չի գգար՝
թէ ինքը միշտ խաբել է ջօլ էֆէնդիներէն։ Ին-
չը պար թէ լուս կանէ՝ որ հեռի միայ պատրիար-
քի կամ կառավարութեան այս տեսակ խաբե-
րի կամ զորհրդերից և երևութեան գիտելիքից,
թէ զորովէ այդ բարքներին, և պարտաւոր է
ամ ըստ ամէ, առանց յետաձգելու, կանոնաւո-
րապէս վճարել իր տուրքը՝ իբրեւ իր տնական
մի անհրաժեշտ ծախքը և ազատ լինի այդ կրն-
առտ և տաժանելի պարտքից՝ որ յետաձգելով
պատճառ եղած է շատ տուրքեր ըստման, շատ
մարդիկներ ի սպանման տաճիկ հարկահանների
բռնութիւնների երեսին։

Դեռ չի գիտեր այս միտմտ ժողովուրդը՝ որ
կառավարութեան կարծեցեալ այդ չորհրդ՝ տուր-
քերի մասին, դարձեալ իբրեւ պարտք, իբրեւ
պագայ է՝ այսինքն, իբրեւ յետաձգելով կար-
ծանալով կառավարութեան տոմարների մէջ՝
որ ուրիշ արդիւնք չունենար՝ եթէ ոչ, ապագայ-
ին մէջ, ծանրաբեռնել ժողովուրդին՝ պարտե-
րով։ Մեր պարզամտ ժողովուրդը տակաւին չի
զգար թէ պատրիարքի այս չորհրդ և առաջ-
նորդների կամ ջօլ աղաների երախտաբար-
կան այս տեսակ ցոյցերը՝ ժողովուրդի անուրով,
իրանց օգտին և եթ կարող են ծառայել Թի-
բալի մեքը, ոչ թէ միայն բանի կամ գրով չը-
նորակալութիւն կը յայտնեմք, այլ կը խոս-
տանալք արձան ևս կանգնել պատրիարքի ա-
նունին՝ եթէ նորին սրբազնութիւնը յաջողի մի
անգամ և եթ ջնջել տալ կառավարութեան ար-
ձանագրութիւններից գաւառացի ժողովուրդին

Ի վերջին ժամանակ տեսնեմք, զի բա-
զումը ի մերաջնէից, որոց նախնիք ի ժամա-
նակ ժամանակ արարեալ են ինչ ինչ բարե-
գործութիւնս, թաղեալ կան ի գաւիթս եկեղե-
ցեաց, ինքեանք որպէս ժառանգորդք հանգու-
ցելոցն ցանկան ունել գտելի ի շարս նոցին ի
գաւիթս եկեղեցեաց. այլ քանզի ի սկզբանէ
անտի կայ կարգ սահմանեալ յաղաթս ննջեցե-
լոց, թէ ոչ ոք պարտ թաղի, և նախնիք սա-
կաւ բացառութեամբ չորհեալ են տեղի արանց
մեծագործաց և կամ բաղաձայնաւ եկեղեցակա-
նաց ընդ հովանեաւ տաճարաց, որոց բարեբալ-
հանդիսացեալ են ի կենդանութեան հանգու-
ցեալ մեծագործք և որոց վասն երգէ եկեղեցին.
«Պարման գեկեղեցի չինողաց, սպասաւորաց,
երախտաւորաց, պողատուից և այնոցիկ, որք ընդ
հովանեաւ սրբոյ տաճարին են հանդուցեալք»։

Աւտի և պարտ է չափ և սահման դնել, զի մի
ամենայն որ իրաւուն ինքեան համարեացի թա-
ղի ի գաւիթս եկեղեցեաց, զի այլ է գերեզմա-
նատուն և այլ գաւիթ եկեղեցւոյ։ Այլ զի մի
յետ այսու լիցին այդպիսի առաքելութիւնք
և ինդրուածք ի կողմանէ այլ և այլ ամենայն
կողմնակի եղանակով, յարմէ և ծագին անբա-
ւականութիւնք զինի մերժման՝ յայն սակս սո-
վին Հայրապետական կոնդակաւ պատուիրեմք
զերապատութեանը բառեալ զայն սովորութիւն
ժառանգացն թաղի ի կարգս նախահարցն իւ-
րեանց ի գաւիթս եկեղեցեաց, և եթէ պատա-
հեցցին բացառութիւնք, յայն դէպս զիմել Մեզ
և ստանալ զհրաման, թէ ոչ ոք և ոչ ոք մե-
ծագործացն ազգի և եկեղեցւոյ պարտ է տալ
տեղի հանգստեան ի գաւիթս եկեղեցեաց, և
ոչ թէ վասն ամենայն ծառայողաց և կամ ա-
նուանական աղատականացն խափանել զգաւ-
թեւ և դարձուցանել ի գերեզմանատուն։

Մկրտիչ Վաթողիկոս ամենայն հայոց։
Թ. 194.

Դե 10 փետրվարի 1899 ամի
Ըստ Տոմարի Ռեզիլ
Դե Հայրապետութեան մերում Զ. ամի
Դե Տիֆլիս։

Մի քանի տարուան յետեալ տուրքերը՝ սկսած
1895 թուականից, այսինքն կոտորածների սկզբ-
բից մինչև յառաջիկայ ըստանդորդ դարապետելը
որ ատեն հայ ժողովուրդը... Բնաշխարհ, հնորակ
վեհափառ տուլթանին, կատարեալ երջանկու-
թիւն ու անդրբորութիւն պիտի վայելէ...

Շատ տխուր են վանից հասած նամակները։
«Երեւել» հրատարակել է նոցանից մի քանիսը,
բայց ինչ օգուտ ուղարկել ու լաց լինել... հանր
էր որ պատրիարքի յաղթանակը դնէ այդ տը-
խուր գործում երեւել. ապահով, թող թէ այդպի-
սի մի լույս արշալոյսն անգամ չի ծախել դեռ,
այլ, ընդհակառակը, խաւարը առաւել թանձ-
րացաւ...

Վանեցիները, մայրաքաղաքում, խնդրազիր
մատուցին պատրիարքին, որ բարեհաճի Իզմիրի
նախորդ առաջնորդ՝ Ասլանեան նորապսակ ե-
պիսկոպոսին նշանակել հովիւ Վասպուրականի,
իսկ, միւս կողմից, կիմանալը, որ Գիւմրեսեան
Հայեակ եպիսկոպոսը՝ բարեհաճել է տրամադ-
րութիւն ցոյց տալ՝ Վան երթալ և կաթօրիկ
դարձոյններին ազգասիր բաւար անել Հայաս-
տանեայց եկեղեցւոյ ծոցը՝ պայմանաւ սակայն,
որ պատրիարքաբանը իրան տրամադրու-
թեան տեւ է դնէ մեծ գումար և փող...
զիտէք, մեք «աշխիւ-բաշխիւ» շատ լաւ «հալվա»
չինել դիտէ, եթէ իրան տրամադրութեան տակ
զրկեն ալիւրը, իւրի ու չաքարը։ Պատրիարքը
այս գործին կարգադրութիւնը պիտի թողու-
վարչութեան, վարչութիւնն ալ պիտի յանձնէ
յաջողութիւն, որ պիտի ընտրուի մայիսի դուարթ
օրերում, իսկ դերապայծառ Աղաբեան՝ Օրմա-
նեանի խաթիբը համար պիտի սպասէ մինչև
այն ատեն... իր գործը շարունակելով։

Այստեղ լուր կը շրջի, թէ «Ճէրիզէի»-Շար-
գիլէյէ խաբարը՝ Ձիւնէլէգեան էֆէնդիի ստացել
է նոր արտօնագիր, «Մուրադաղալ» անունով մի
թերթ հրատարակել հայերէն լեզուով։ Այս թեր-
թի մասին «Բիւրուկ» դրած էր արդէն, թէ ինչ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ (Նամակ Պետերբուրգից)

Փետրվարի 7-ին
Ինձ աջողվեց ներկայ լինել այն գրական-ե-
րաժշտական երեկոյթին, որ այստեղի ռուսաց
գրականական ֆօնդի ընկերութիւնը տուեց ամ-
սիս 6-ին ի յիշատակ լեհաց նշանաւոր գրող
Ադամ Միցկէվիչի ծննդեան հարիւրամեակի, որ
լրացել էր 1898 թ. դեկտեմբերի 12-ին։ Ասում
եմ՝ աջողվեց, որովհետեւ դեռ մի շաբաթ առաջ
բոլոր տոմսակները ծախված էին և նոյն իսկ
ամենամեծ դնով անկարելի էր մի տոմսակ
ձեռք բերել։ Նա այդ շատ հակահայել էր. ռուս
գրողները և հրապարակախօսները—Վէյնբերգ,
Սպասովիչ, Բոբորիկին, Կորոնիյո, Կարաբէլի-
կի, Միխայիլովիչ, Գերարդ և ուրիշները պէտք է
տօնէին Լեհաստանի ամենամեծ ժողովրդական
բանաստեղծի յիշատակը, այն անձին, որը, ինչ-
պէս ասաց Սպասովիչ՝ համարվում էր Ռուսաս-
տանի քաղաքական թշնամի Ամենքը
շտապել էին վաղորդ տոմսակ ձեռք բերել, և
Պետերբուրգի Կրեդիտային ընկերութեան ըն-
դարձակ դահլիճը, որի մէջ տեղաւորվում է մօտ
3000 հոգի, լի էր ամենաբնորոք լիտերատուր
հասարակութեանը։ Այս անգամ ներկայ էր և
բազմաթիւ լեհ հասարակութիւն, որն եկել էր լեհ-
ու, թէ ինչպէս են տօնելու ռուս գրողները ի-
րանց պաշտելի բանաստեղծի յիշատակը։ Պ. Ի.
Վէյնբերգի սիրալիր աշակցութեամբ, ինձ ա-
ջողվեց, իբրեւ մասնուի ներկայացուցչի, ամբի-
սի մօտ մի արթուն անհայտ։ Ինձ աջողվեց ներ-
կայ լինելու մի երեկոյթի, որի նմանը, ինչպէս
ասում էին ինձ՝ շատ քիչ է պատահում Պետե-
րբուրգում և լսելու ռուսաց վկայագրութեան ու
հրապարակախօսութեան նշանաւոր ներկայա-
ցուցիչներին։

Երեկոյթը բացեց պ. Վէյնբերգ ալեգորի ծե-
րունի գրողը «Памяти Мицкевича» վերնագրով մի
գեղեցիկ ճառով։ Մենք հաւաքվել ենք այստեղ—
ասաց նա—տօնելու սլաւոնական աշխարհի ա-

նօրէն փորձանքի հանդիպել էր. հիմա քիչ
օրէն լոյս պիտի տեսնէ առաջին թերթը։ Տնը
Աստուած, որ խեղճի գլխին էլի մի ուրիշ փոր-
ձանք չի պատահէր։

Ամենէն ազատ լրագրից, Կ. Պոլսում, հիմա
«Բիւզանդիոն» է. նա միայն կը վայելէ տէրու-
թեան կատարակալ վստահութիւնը։ «Մշակ»,
«Ճարագ» և արանց նման թերթերը, որոնք մու-
քը արդելուած է Տաճկաստանում՝ «Բիւզանդիոն-
նի» գրասենեակում միայն կերելին և թերթին մէջ
յականէ յանուանէ կը յիշուին անպատկառ զըր-
պարտութիւններով... բացի նրանից՝ ոչ ոք չի
թոյլ տրուած ոչ և է արգելուած թերթի ա-
նուն բերան առնել. այս առանձնանորոշումը
բաւական է «Բիւզանդիոնին» իր «օճախը» կազ-
մելու. նա բացարձակ օրդանն է պատրիարքին
և նրա մասնաւոր պաշտպանութիւնը կը վայելէ
նիւթապէս ու բարոյապէս։

Մեծ հարցը, որ կը յուզուի այսօր պատրիար-
քաբանի մէջ՝ Իզմիրի առաջնորդական հարցն է։
Իզմիրցիները փափաք են յայտնել, որ իրանց
նախկին առաջնորդը՝ Մելիքեանի եպիսկոպոսը
վերադառնալ իր աթոռը։

Բնական է, որ Մելիքեանի եպիսկոպոս չի
երթար և պատրիարքաբանը, իր կողմից, թեկ-
նածուներ ցոյց կը տայ։ Իզմիրցիները վերջնա-
կանապէս կը մերժեն պատրիարքաբանի ցոյց
տուած թեկնածուները՝ որով ոչ իզմիրցիներին
պիտի յաջողի մի վերադառու գտնել՝ մի քանի
տարիէն նրա ոտքերի փոխին թօթափել տալու
համար, և ոչ պատրիարքաբանը կարող պիտի
լինի իր ուղած մարդը քնել՝ մի քանի ամիսէն
եպիսկոպոս ձեռնադրել տալու համար։

Հիմա մէկ մէկ իրաքը՝ դիւանագիտութիւն է։
Աղգին գործը այս տեսակ դիւանագիտութիւն
ներէն չորհիւ. եօլա կերթալ... չի կարողացի
պատրիարքին բողբը՝ վեհափառ Հայրապետին...
Առաջնակարգ դիւանագիտութիւն մի չի դա...

Գրական

մեծամեծ բանաստեղծի յիշատակը, ինչպէս չու-
տով, մայիսի 26-ին, պէտք է տօնենք այստեղ
սլաւօնական աշխարհի մի ուրիշ ամենամեծ բա-
նաստեղծը—Պուշկինի յիշատակը։ Միցկէվիչ և
Պուշկին, լինելով սլաւօնական աշխարհի երկու
ամենամեծ բանաստեղծները՝ մի և նոյն ժամա-
նակ եւրօպական աշխարհի ամենամեծ բանա-
ստեղծներէն են։ Ապա նա բացատրեց այն
միտքը, որ Միցկէվիչ, լինելով բուն ժողովրդա-
կան բանաստեղծ, մի և նոյն ժամանակ համա-
մարդկային բանաստեղծ էր, որովհետև միայն
իսկական ժողովրդական, ազգային բանաստեղծը
և զորով կարող է համարուիլ միայն բանա-
ստեղծ և գրող լինել, ազատ, ի հարկէ,
նեղ ազգայնական, ցեղական ձգտումներէն։
Միցկէվիչ իրէպիտոս գրող էր, մի մարդ,
որ անսահման և անզորութիւն կերպով հա-
ւատում էր իրէպիտոս, ձգտում էր նրանց
իրականացնել իր հոգու ամբողջ զօրութեամբ։
Նա միայն իրէպիտոս մինչև մահը. իր ազգի հետ
միասին նա սիրում էր մարդկութիւնը, կարեկ-
ցում էր մարդու ցաւերին, տանջանքներին և
անպայման հաւատում էր գաղափարի յաղթա-
նակին։ Միցկէվիչի այդ յատկութիւնը, իրէպի-
տոս և գաղափարի յաղթանակին կորուսէ հաւատա-
լը՝ պէտք է մեզ համար առաջնորդող աստղ
լինի մեր կեանքի մէջ—մերջացրեց ճառարտը,
և դառնալով ուսանող երիտասարդութեան՝ ա-
ւելցրեց. «Եւ դու, երիտասարդ սերունդ, մտի-
ր կեանքի մէջ այդ ջերմ հաւատով. երբեք մի կոր-
ցնիր այդ հաւատը. այլապէս դու մեռած ես»։
Բուռն, որոտալից ծափահարութիւններով ըն-
դունեց հասարակութիւնը այդ խօսքերը։ Այդ
ծափահարութիւնները աւելի ազդեցիկ, զորաւի
դարձան՝ երբ ամբիօն բարձրացաւ մի կարճա-
հասակ, տեղի դէմքով, մէջքը կռացած ծերունի.
դա՛ Սպասովիչն է։ Այդտեղ իսկոյն յիշեցի մեր
թուրքերի առաջնը. Էրիկի մանուկ տուր, երե-
սը մի տեսնեմք։ Սպասովիչն տեսնողը կարող
է կարծել, թէ մի հասարակ, միամիտ ծերունի
վաճառական է տեսնում. բայց հէնց որ այդ
միամիտ ծերունին բերանը բացում է, դուք իսկով
զգում էք, որ նրա բերանով խօսում է հեռու-
ակութիւնը, որ նա մարդասիրտ է թափում։
Նրա ճառը վերին աստիճանի համարձակ, պարզ
և մի և նոյն ժամանակ վեհ էր ու հանձարաւոր։
Նա ասաց որ, «Սիւպայն», մենք մեզ ենք օգուտ
տալիս, տօնելով մեծ և հանձարաւոր մարդ-
կանց յիշատակը, որովհետև նրանցից, նրանց
կեանքից շատ բան ենք սովորում. բայց իս-
կական, ճշմարիտ գաղափար մեծ մարդկանց
մասին կարելի է կազմել միայն այն ժա-
մանակ, երբ մենք նրանցից շատ հեռու ենք
կանգնած։ Սարի բարձրութեան և մեծու-
թեան մասին մենք չենք կարող գաղափար կազ-
մել՝ կանգնելով տարի գլխին։ Կովկասեան ասե-
րի վեհութիւնը, մեծութիւնը մենք բմբռնել կա-
րողանում ենք՝ երբ դիտում ենք նրանց մի քանի
օրվայ հեռաւորութիւնից և ոչ թէ, երբ կանգնած
ենք նրանց ստորոտում։ Մենք այժմ աւելի ճշ-
գրիտ գաղափար կարող ենք կազմել Միցկէվիչի
և Պուշկինի մասին՝ քան իրարից, իսկ մեր
սերունդը մեզանից աւելի օրելի կ'ըլլի և անսխալ
համոզմունք կարող է կայացնել նրանց մասին։
Եւ դրա պատճառն այն է, որ մեծ մարդկանց
և հանձարեւոր թերութիւնները, անցողական
յատկութիւնները անհետանում են մեր տեսու-
թիւնից, իսկ մնում են նրանց իսկական, ներ-
քին, բուն հոգեկան մշտնջենաւոր յատկութիւն-
ները, որոնք և ընդունում են այդ մեծ մարդ-
կանց, և մենք տեսնում ենք, գնահատում ենք
նրանց մէջ միայն. գեղեցիկը, բարին, ճշմարիտը,
գաղափարականը։

«Միցկէվիչ, ինչպէս յայտնի է՝ Ռուսաստանի
բազմաթիւ թշնամին էր և այնու ամենայնիւ
զեւ Սէքստուր II թող տուեց նրա գրուածը-
ների հրատարակութիւնը Ռուսաստանում, Նի-
կոլայ II Կայսրը թող տուեց արձան կանգնեցնել
նրան Վարչապետի, իսկ մենք հանդիսաւոր
կերպով տօնում ենք նրա յիշատակը. ինչու այդ
հարաւոր եղաւ, որովհետև ընկելով Միցկէվիչի
գրուածները՝ մենք տեսանք, որ նա իսկպայէս
թշնամի չէր ուսում ժողովրդին, նա միայն ուս-
աց կառավարութեան թշնամին էր և այն ևս՝
զրգոված, իւրովստան հասկացած, բայց անկեղծ
հայրենասիրութիւնից։ Նա մօտ բարեկամ էր
ուսումնասիրող արտադասուցիներին՝ Պուշ-
կինի, Թուկովսկու, Բարեատովսկու հետ. նա հա-
րամարդկային գրող էր և բանաստեղծ, սիրում
էր մարդկութիւնը և ուսում ժողովրդը և ոչ
մի ատկութիւն չէր տաճում դէպի նա։ Դրա
համար և մենք յարգում, սիրում ենք նրան։
Ապա ատենաբանը նայն անկեղծութեամբ
յայտնեց, որ լեւ ազգը պէտք է այժմ հայտնի
այն մտքն հետ, որ լեւական հարցը, իբրև մի-

ջազգային հարց, այժմ այլ ևս գոյութիւն չունի.
այժմ գոյութիւն ունի նա միայն իբրև կուլտու-
րական հարց, և ահա այդ աստիճանում, քաղա-
քակրթութեան և զրակաւորութեան ասպարիզում,
երկու ցեղակից ազգերը՝ լեւերը և ուսները
պէտք է միանան, հաշտվեն և իրար ձեռք
մեկնեն։
Օվաղիաների արժանացան նաև վիպագրողներ
Բօբորիկին, որ կարողաց մի ճառ «Միցկէվիչ, իբ-
րև էպիկական բանաստեղծ» վերնագրով. Կօր-
լենկո, որ կարողաց Միցկէվիչի «Պան Թադէուշ»
հեշակաւոր պօէմայից մի կտոր, Կարաբէկովի,
որ կարողաց Միցկէվիչի «Պապեր» դրամատիա-
կան պօէմայից մի հատուած, վերին աստիճանի
արտայայտիչ և զգածված լեզուով. բայց հասա-
րակութիւնը թնդացրեց ամբողջ սրան համա-
կրութեան բուն ցոյցերով՝ երբ Ն. Միխայ-
լովսկի կարողաց իր ճառը «Միցկէվիչ և Պուշկին»
վերնագրով, թէև այդ ճառը գրեթէ կրկնութիւն
էր Սպասովիչի արտասանած ճառի։

Երաժշտական մասը, որ կատարեցին մի քանի
տիկիները՝ դարձեալ ամբողջովին վեր էր առնված
Միցկէվիչի բանաստեղծութիւններից։
Ամբողջ երեկոյնը վերին աստիճանի ոգևորելի
և ջերմ զգացումներով ներշնչված էր ու խոր,
գեղեցիկ տպաւորութիւն թողեց հանդիսական-
ների վրա, որոնք չորս ժամ շարունակ լսում
էին ուսում գործներին, և հրապարակախօսներին
նրանց բարոյած վեհ, հանրամարդկային մտքե-
րին օվաղիաներով պատախաճում։ Այն, քաղա-
քակրթութեան, զրակաւորութեան հոգի վրա կա-
րող է հայտնութիւն, բարեկամութիւն հաստատ-
վել ազգերի և ցեղերի մէջ։

Հ. Առաքելեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅԻՑ

Փետրվարի 12-ին

Բարեկենդան է. Բագուն կերպարանափոխվել
է. այժմ այլ ևս հասարակական վայրերում չա-
յէ լսվում նախի գնի կամ զանազան ակցիանե-
րի բարձրանալու կամ ցածրանալու մասին։
Միայն տարբեր մի ամիսն է, որ նախքան իր
ակնստուգը դրածնով բռնում է երկրորդական
տեղը՝ Նրան փոխարինում են խնձորներ, նշա-
նաւորէր, հարսնախօսութիւն, հարսնիք։
Կիրակի, փետրվարի 7-ին, տեղիս հասարակա-
կական դահլիճում կայացաւ տնտես. Կոստա-
նեանի կոնցերտը, մասնակցութեամբ օր. Պաու-
լինայի Վերջինս ունի երաժշտական ճաշակ,
զիտեք երգեց, բայց նրա ձայնը փոքր է և կոր-
ցրել է իր թարմութիւնը. օրիորդին շատ էր
խանդավարում անփորձ ակօպանիստօրի չիտ-
թուլը Պ. Կոստանեան ունեցաւ. կատարեալ ա-
նուրութիւն։ Նրա քաղցրահնչուն ձայնը, կրթ-
ված խորական շիւթան, միայնած նրա զգաց-
մունքի հետ՝ ազդում էր հասարակութեան վրա։
Արտիստը հրաշալի կերպով երգեց մի քանի արիա-
ներ։ Աղբյուրի էր նոյնպէս Դեյնի և Շուտանի բո-
մանները, որոնք պ. Կոստանեան երգեց վիօլոն-
չիի հետ, դաշնամուրի ակօպանիստով Վիօլոն-
չիի սեր շատ աջող նուագում էր պ. Լաբլիօնով
իբրև սիրող։ Կոնցերտը վերջանաւ «Աւուսկա»-ով։
Ծափահարութիւններին և քրիզ-երին բաւականու-
թիւն տալու համար՝ պ. Կոստանեան երգեց
և «Պաղ աղբիւրի մօտին» հայերէն երգը։

Մ.

ՆՆՐԻՒՆ ԼՈՒՆԵՐ

Մի քանի օր է արդէն, որ մայրաքաղաքը
լրագրները չեն ստացվում թիֆլիսում, ճանա-
պարհների փչանալու պատճառով։

Կիրակի, փետրվարի 14-ին, կայացաւ Ներսի-
սեան զարդոյի տարեկան ակումբ։ Դպրոցի հիմնա-
դիր Ներսէս V կաթողիկոսի հոգեհանգիստը կա-
տարելուց յետոյ Վանքի մայր եկեղեցում ժո-
ղովուրդը գնաց զարդոյի շինութիւնը, ուր տե-
ղի ունեցաւ հանդէսը։ Դահլիճի փոքրութեան
և շինութեան անապահով լինելու պատճա-
ռով հանդէսը կատարվեց բաց օդում, զարդ-
ոյի բակում։ Հասարակութիւնը լցրել էր բազմ
և պատշաճաբեքներ։ Հանդէսը սկսվեց շարականով
և Կայսերական հիմնով, որից յետոյ աշակերտ-
ներից մէկը կարողաց մի ներբող Ներսէսի յիշա-
տակին։ Դպրոցի տեսուչ Ս. Բալաշեան կարողաց
զարդոյի ուսումնական մասի վերաբերեալ տեղե-
կադիրը, որից երևաց, որ 1897/8 հաշուաւորում
զարդոյն ունեցել է 676 աշակերտ, որոնց ամե-
նամեծ մասը թիֆլիս քաղաքից և թիֆլիսի նա-
հանգիցն են, այն է 451 անձն, իսկ մնացածները
միւս նահանգներից և հեռավոր տեղերից։ Աշա-
կերտներին երբորք մասը արհեստագործներն
որ-
դիք են, ժողովուրդային այդքան է և վաճառա-

կաններն որոնց թիւը, իսկ այնուհետև հերթով
գալիս են՝ ստորին ծառայողների, հոգևորական-
ների (10%), երկրագործների որդիք և այլն։
Աշակերտներից մօտ հարիւր հոգի ստացել են
օգնութիւն կամ իբրև որդեգիրներ, կամ իբրև
թոշակաւուներ և կամ ստացել են ձրի ճաշ և
հագուստ։ Հերթակալ հոգաբարձու Ն. Տիգրա-
նեան կարողաց զարդոյի տնտեսական մասի տե-
ղեկազմը, որից երևաց, որ զարդոց հաշուա-
րում ունեցել է մօտը 70,734 բուբլի 50 կ., իսկ
ծախս 67,661 բուբլի 34 կօպէկ։ Դպրոցի ան-
ձեռնխելի գումարը ևս 1-ին յունվարի 1899
թիւ համար է 224,968 բուբլու 75 կօպէկի—
Հոգաբարձու Ա. Բալանթար մի համառօտ
ճառով հաշիւ տուեց՝ հոգաբարձութեան հնգա-
մեայ գործունէութեան մասին։ Բացատրելով
զարդոյի բազմաթիւ կարիքները և չեղելով, որ
զարդոյի ամենամեծ կարիքներից մէկը, այն է
զարդոյի շինութիւնը, ղեւ չէ իրագործված՝ Ա.
Բալանթար մատնացրեց արաւ ներկայ հոգաբար-
ձութեան գործունէութեան դրական կէտերի
վրա։ Ներկայ հոգաբարձութիւնը մտցրեց հրա-
պարակական հաշուաւորութեան նոր եղանակ և
սկսեց տպագրել իր տեղեկագիրները, բարեւոյց
զարդոյի ուսումնական մասը՝ մտցնելով կարգ և
կանոն ըստ գործառնութիւնների մէջ, հարըս-
տացնելով գրադարանը և ժողովածուները, նա
մշակեց ուսուցչական թոշակաւորի ծրագիրը,
սահմանելով ուսուցչիների համար թոշակներ
ծերութեան օրերում և ապահովութիւն նրանց
ընտանիքներին համար. բարեւոյց բժշկական օգ-
նութեան գործը. կազմակերպեց երգեցողու-
թեան և երգեցիկ խմբեր կազմելու գործը. ա-
ռանձին ուշք դարձրեց շինութիւնների վերանո-
ւորութեան գործի վրա և վաղեւու ձև տուեց
Սուրբատիկ բազարի 21 կայակէն, Արդութեան
տանը Սերգիեւսկայա փողոցում, Փեղելի և ուրիշ
ուսումնական շինութիւններին. կազմել տուեց
զարդոյի եօթնամսնիկ տարվայ պատմութիւնը
և մշակեց ծրագիրներ զարդոյի թէ ուսումնական
և թէ տնտեսական բարեփոխութիւնների մա-
սին։ Ապագայ հոգաբարձութեան է վերա-
պահված զարդոյի շինութեան գործը և միւս
ծրագիրները։ Այնուհետև թիֆլիսի թիմի ա-
ռաջնորդ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենեան
պարգևատրեց ընտիր աշակերտներին գրե-
քերով՝ համաձայն մանկավարժական ժողովի
որոշման։ Սրբեցիկ խումբը երգեց մի քանի եր-
գեր դաշնամուրի ներդաշնակութեամբ։

Անդրկովկասեան իշական ինստիտուտի տես-
չուհի Օ. Բուտուրլինա, ինչպէս հեռագրում են
«KABAZ» լրագրին Պետրբուրգից՝ նշանակված
է Պետերբուրգի Նիւակովտիսեան ինստիտուտի
տեսչուհի, իսկ նրա տեղ նշանակված է Վիլնոյի
իշական գիմնազիայի աւագ վերակացուհի տ.
Պապովա։

Կիրակի, փետրվարի 14-ին, թիֆլիսի քաղա-
քային դումայի դահլիճում կայացաւ Կովկասեան
հայոց Բարեկենդանի ընկերութեան
ընդհանուր ժողովը, քառասուն անդամների ներ-
կայութեամբ։ Ժողովի նախագիծ բժշկական Բ.
Նաւասարդեանից առաջարկութեամբ ժողովը լայ-
րեց ընկերութեան պատուաւոր անդամ հանգու-
ցեալ Եսայակ Մկրտչ-Հայկազեանի յիշատակը՝ ոտքի
կանգնելով և ապա անցաւ հերթական գործերին։
Ընկերութեան խորհուրդը ներկայացրել էր ժո-
ղովին իր նախահաշիւը ներկայ 1899 թիւ հա-
մար։ Նախահաշիւը կազմված է 11,706 ր. 18 կ.
գումարի։ Նրա անհնաւած մասը, այն է 4,649 ր.
22 կ. նշանակված է զանազան զարդոցնում
ուսանող անձանց, 2,405 ր. նշանակված է գրա-
դարան-ընկերացարանի պահպանութեան, 1,295 ր.
խորհրդի դիւանի համար և միայն 900 բուբլի
տաւաղանների օգնութեան։ Այդ նախահաշիւի
մէջ են և 796 ր. 96 կ. Արդութեան-Նաղարեանի
յատուկ գումարի այն մասը, որ նշանակված է
ծախսելու 1899 թիւ և 1,400 բուբլի, որ յա-
կացրված է գաղթական աշակերտներին պահպա-
նութեան համար ապագայում։ Ժողովը շատ
մանրամասն ըննութիւնից և վիճաբանութիւն-
ներից յետոյ, հաստատեց նախահաշիւը, աւելաց-
նելով Հաւաքարի էթանագիւն գրադարանի օգ-
նութեան համար նպաստ 200 բուբլի։ Կարգադե-
ցին և հաստատվեցին Ընկերութեան ճիւղերի
նախահաշիւները։ Ի միջի այլոց Բաթումի ճիւղը
նշանակել էր զեղչել նրա 1500 բուբլի պարտքը,
որ նա վերցրել էր կենտրոնից վեց տարի սրա-
նից առաջ։ Ժողովը անկարելի համարելով
պարտքի զեղչումը՝ որոշեց չը ստիպել, որ նրա
վճարումը կատարվի անպայայտ, այլ կարողու-
թիւն տալ խորհրդի հետ բանակցելով սահմանել
վճարման ձևը մի քանի տարիների ընթացքում։
Այնուհետև կարգադրեց հանդուցեալ Խուզարեա-
նի կտակով մնացած գումարի գործադրութեան

համար կազմված այն զեկուցումը, որ մշակել
էր ընհանուր ժողովի կողմից ընտրված յատուկ
յանձնաժողովը։ Չանազան առաջարկութիւննե-
րից յանձնաժողովը կանգ էր առել որ բանոց
հիմնելու առաջարկի վրա։ Յանձնաժողովի եր-
կու անդամ՝ Կ. Նաղարեան և Վ. Վարդանեան,
որոնք չէին մասնակցել յանձնաժողովի նիստե-
րին՝ առաջարկում են իրանց կողմից Խուզա-
րեանի գումարով պահպանել ընկերութեան գրա-
դարանը։ Ժողովը այդ խնդիրների ընտրութիւնը
յետաձգեց հետեւալ նիստին, որ պէտք է կայա-
նայ առաջիկայ կիրակի օր, փետրվարի 21-ին։

Երգիչ Ա. Կոստանեանի բենեֆիտը, որ
կայացաւ արքունական թատրոնում փետրվարի
12-ին՝ անցաւ մեծ աջողութեամբ։ Կոստանեան
«Վիգելտո» օպերայի մէջ Մանտուանեան դուքսի
դերում առիթ ունեցաւ ցոյց տալ իր մշակված
ձայնի բոլոր նրբութիւնները։ Կոստանեանի եր-
գած ոչ միայն արիօգոներն էին, որոնք պարու-
նակում են կողորդած դաշաւալիկներ, այլ և բե-
հիտաթիւների մէջ արտայայտում էր երաժշ-
տութեան ընդուն զգիւն։ Կոստանեանի ձայնը
ընդարձակ ձայն չէ, բայց լաւ մշակված է և
կատարեալ երաժշտական է։ Հասարակութիւնն
ընդունեց ջերմ կերպով և բուռն ծափահարու-
թիւններով. բենեֆիտինտը ստացաւ բազմաթիւ
ընծաներ։ Ջիւզպի դերի մէջ դուրս եկաւ առա-
ջին անգամ երգչուհի Յերգիկ, որ անփորձ կա-
տարողի տպաւորութիւն թողեց։ Բիգոլետի դե-
րում Իւլիա-Տօբ չը բաւականացրեց հասարա-
կութեան, որ նրբորս նայն բեմի վրա տեսել է
աւելի աջող կատարող Մակաւովին։

Վերջին օրերս թիֆլիսի նահանգական դատա-
րանում ընկնում էր ստատսկի սօվետնիկ կին
Վէրա Պօլոնսկայի և Նիկ. Կլարամաձէի գործը,
որոնք մեղադրվում էին վախառութեան մէջ։
Փետրվարի 13-ին նահանգական դատարանը կայ-
ացրեց իր վճիռը, որով երկու մեղադրողներն
ևս մեղաւոր են ճանաչված այն բանում, որ նը-
րանք վախառութիւնը արհեստ էին դարձրել
և ահալին տոկոսներով փող էին պարտք տա-
լիս։ Դատարանը վճռեց զրկել նրանց բոլոր ի-
րաւունքներից և քստրեն Ստարախանի նահան-
գը։ Դատաւճիռը յայտնելու ժամանակ Նիկ.
Կլարամաձէ ուշաթափվեց։

ՂԱԶԱԽԻՑ մեզ գրում են. «Հաստատ աղբիւ-
րի տեղեկացանք, որ մեր գաւառից մօտ 800
տուն սիւննի մասնաւորականներ արդէն թող-
տուութիւն են ստացել գաղեկելու թիւրքիս»
հաստատվելու այնտեղ անտէր և ամայի մնա-
ցած հողերի, այգիների և արօտանդանների
վրա, որոնք ազատ են մնացել քրիստոնեայ ազ-
գաքակութեան հեռանալուց յետոյ։

Ջիւլիանի զաւառի ՄԵՄ-ՇԵՆ գիւղից մեզ
գրում են. «Մեր գիւղում պատահեց հետեւալ
ցաւալի դէպքը։ Մի գիւղացու աղջկայ նշանա-
դրութեան ժամանակ վայրենի կուլ է սկսվում
զիւղացիների մէջ, որի ժամանակ փայտի հար-
ուածներին զոհ են գնում տանտիրոջ եղբոր որ-
դին և մի ուրիշ գիւղացի։ Առաջինը թողել է
վեց փոքրահասակ աղջիկ և մի տղայ։ Ձերբա-
կալված են սպանողներին մէկի անհրը, որը
յայտնի է իր շատ անհանդիստ բնաւորութեամբ,
և նրա մի ուրիշ հեռաւոր ազգականը, որը մի
ուրիշ սպանութիւնից յետոյ՝ նոր էր աղատվել
աքտորից ու բանտից։ Առհասարակ մեր գիւղը
չը նայած որ մօտ երկու տասնեակ շատից-քիչ
կրթված անդամներ ունի՝ այս ու այն կողմը
ցրված՝ յայտնի է իր բնակիչների վայրենի,
կոշտ-կոպիտ և յանդուգն բնաւորութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԳՈՒՅԻՑ

Արեւմտեան Պարսկաստան, 12 փետրվարի

Նուպար փայայի թաղումը տեղի ունեցաւ
փետրուար 8 չորեքշաբթի։ Մարմինը առջի օրը
Մարտիկին հասած էր Սակալէին չորեքշաբթի
և զետեղուած էր խառն դատարաններու պաշ-
տօնատնում, որ մեծաւոր զարդարուած էր։ Օրը
չորեքշաբթի առաւոյ անձրևոտ էր, ու վաղ կար
որ հանդէսին փառաւորութիւնը պիտի լինաւ
վէր. բայց երկաթական անձրևը ամպի պէ-
շտ կանցնի կերթայ. կէս օրին կասկաւոր
աղւոր երկինք մը ունեցանք։

Ժամը ճիշդ 2-ին թափօրը դուրս եկաւ դա-
տարանէն, որ գրեթէ դէմդէմ է Մէհմէդ-Ալի
արձանին։ Լուռ դադարէր լուռ արձանին առջեւ
անցաւ. ու այդ երկու շուրթերն մէջ կամփոփ
վէր երկու մեծ մաքեբու ստեղծած պետութեան

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул № 13.